

**ՀՀ Սյունիքի մարզպետ Ս. Խաչատրյանի ողջույնի խոսքը «Ուսանողական ամառ Կապան-2016»>> փառատոնի բացման կապակցությամբ**

Սիրելի՛ ուսանողներ, շնորհավորում եմ ձեզ «Ուսանողական ամառ Կապան-2016»>> փառատոնի կապակցությամբ: Այսօր երիտասարդության միջազգային օրն է: Արդեն ավանդույթ դարձած երիտասարդական այս փառատոնը կրկին իր շուրջն է հավաքել սյունեցի երիտասարդներին: «Ուսանողական ամառ Կապան-2016»>>-ը ձեզ հնարավորություն է տալիս ձեռք բերել նոր գիտելիքներ, իրականացնել մի շարք ծրագրեր, հանդես գալ ուշագրավ նախաձեռնություններով: Հուսով եմ, այս օրերի ընթացքում կլինեն բազում հիշարժան պահեր և ձեր մտահաղացումների շնորհիվ կկարողանաք մեր քաղաքում ինչ-որ բան փոխել, նպաստել մարզի զարգացմանը:

Սիրելի՛ ուսանողներ, դուք չպետք է տրվեք անցողիկ գաղափարներին, պետք է ունենաք սեփական ծրագրեր և նպատակներ: Պետության ու պետականության շահերը վեր են ամեն ինչից. ահա սա պետք է դառնա ձեր գործելու նպատակը:

Ձեզ է վստահված մեր երկրի ապագան, ձեր մեջ են վաղվա մեր երկրի տերերը: Վստահ եմ, Հայաստան աշխարհը հուսալի ձեռքերում է:

Թող հաջողությամբ իրականանան ձեր բոլոր նախաձեռնությունները: Բարի երթ «Ուսանողական ամառ Կապան-2016»>> փառատոն: